Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի բարբառների բնորոշ մերձավորությունը պետք է բացատրել ոչ միայն երկրների էթնիկ շերտի միանմանությամբ, այլ առավելապես առաջին, նախնական շերտի նույնությամբ[13]:

Հետաքրքրական է, թե ինչպես էր բացատրում ժողովրդական ավանդությունը Զանգեզուրի և նրան հյուսիսից հարակից գավառների կուլտուրական փոխադարձ հարազատությունը: Այդ ավանդությանը հետևելով Ստեփաննոս Օրբելյան պատմագիրը, որը մի առանձին հպարտությամբ շարունակ հիշատակում է «Սիսական տոհմի, տան, ցեղի...» սխրագործությունները, այդ տոհմի նահապետ Սիսակի զավակներից է առաջ բերում ինչպես Զագին, Զագեձորի վրա իր անունը թողած նահապետին, այնպես էլ Եռանին կամ Առանին՝ Աղվանից նահապետին, որից և՛ Կուր, և՛ Արաքս գետահովիտները մինչև այսօր էլ տեղացիները կոչում են Առան:

«Անուն առաջնոյն (Սիսական տոհմին) Սիսակ կոչիւր: Ի զավակէ սոցա (Վաղարշակ թագավորն) ընտրեալ այր մի յոյժ արի և գեղեցիկ և քաղցր բարուք զԵռան (Առան) անուն և կարգէ նահապետ ի վերայ մեծ դաշտին Առանայ, յերասխայ մինչև ցՀունարակերտ: Եւ վասն քաղցր բարուցն աղու ձայնէին զնա, որ և աշխարհն յանուն նորա Աղուանք (Աղվանք) կոչեցաւ: Ահա այս սակաւ մի տեղեկութիւն քեզ, զի գիտասցես զնոսա ոչ միայն Սիւնեաց, այլ և Աղվանիցն գոլ նախնի, նաև երիցագոյն քան զնոսա»[14]:

Այսպիսով այս ավանդությունը Զանգեզուրի բնակիչներին ազգակից է համարում Առանի աղվաններին, որոնք տարածված են եղել նաև Կուր գետի աջափնյա դաշտում, այժմյան Դաշտային Ղարաբաղում և Գանձակի շրջանում՝ մինչև Ղազախ: Ըստ Մովսես Խորենացու գրանցած այլ ավանդության[15] այդ Սիսակը ստացել էր իր հայր Հայկազյան Գեղամ նահապետից:

«...'ի ծովէն ընդ արևելս (Սևանա լճից—Ս. Լ.) մինչև ցդաշտ մի, որ գետն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմաձիգս և նեղս, ահագին դընդընչմամբ իջանի 'ի դաշտն: Աստ բնակեալ Սիսակ, լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով անուամբ Սիւնիք. այլ Պարսք յընտակագոյն իսկ Սիսական կոչեն»:

Ըստ այս տարբերակի Սիսականները գրված էին ամբողջ տարածությունը մինչև Արաքս և Մեղրու կիրճը, այսինքն և՛ Զանգեզուրը, և՛ Մեղրու շրջանը ներառյալ: Եթե Ստեփաննոս Օրբելյանը ընդգծում է Զագի և Եռանի սերունդների ազգակցությունն ու Սիսակից սերված լինելը, ապա այսպիսով միասին Աղվանական էթնիկ խմբին պատկանելը: Բայց Աղուանք ասելով նա աչքի առաջ ունի Կուր գետի աջակողմյան հովիտը, որտեղ և այսօր հայ բնիկ ազգաբնակչության և՛ լեզվի, և՛ սովորությունների մեջ նշվում են շատ պարզորոշ նմանություններ Ղարաբաղ-Զանգեզուր աշխարհի հետ: Սա Անդրկովկասի այն շրջանն է, որտեղ սկյութա-կիմմերական ամբոխների ներխուժումից հետո առավելապես սակերն են հաստատվել[16]: Մ. Խորենացին վերագրում է Սիսա-

---

13 Հմմտ.՝ Ղարիբյան Աբաբատ, Համառոտություն հայ բարբառագիտության, էջ 180, նաև 249:

14 Օրբելեան Ստ., անդ, գլ. Դ:

15 Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, գ. Ա, գլ. ԺԲ:

16 Տե՛ս իմ հոդվածը «Կիմմերական ներարշավի ուղին Անդրկովկաս», ՀՍՍՀ, ԳԱ, հասարակ. գիտ. «Տեղեկագիր», 1947, № 1: